



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

10052

3KCM1

9-96

ԳՈՒՄԵԴԻՆ

ԻՆՉՊԵՍ Ե ԿԱՌՈՒՑՎԱԾ
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ
ԼԵՆԻՆՅԱՆ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ
ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Լ. Կ. ՅԵ. Մ կանոնադրության մասին
(Պարզ շարադրանք)

ЗКЦИ

9-96

10052

3KCM1 12 7 MAR 2013

121-
21 SEP 2006

-96 ԿՈՄՅԵՐԻՏԱԿՈՆ ԳՐԱԴԱՐԱՆ N 35

47

100 DEC 2000

300 ԳՈՒՄԵԻՆ

2641-90

ԻՆՉՊԵՍ Ե ԿԱՌՈՒՑՎԱԾ
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ
ԼԵՆԻՆՅԱՆ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ
ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

1005
19750

Ռ.Լ.Կ.ՅԵ.Մ. Կանոնադրույթան մասին



987

ՊԵՏԱԿՈՆ ԶՐՈՏՈՐՈՎՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ - 1925

15 SEP 1951

15 MAR 1951

000
000
00-1122

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.

ԱՄԵՆ ՄԻ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ՊԵՏՔ Ե
ԼԱՎ ԾԱՆՈԹ ԼԻՆԻ ՄԵՐ ՄԻՈՒԹՅԱՆ
ԾՐԱԳՐԻ ՈՒ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ՀԵՏ.

Մինչև հիմա յեւ մեր գյուղերում և քաղաքներում շատ կոմյերիտականներ ունենք, վորոնք չեն իմանում մեր Միության կանոնադրությունը: Նրանց կարծիքով կարիք չկա ժամանակ կորցնելու և ուսումնասիրելու կանոնադրության բոլոր կետերը:

Այդպես մտածող ընկերները չարաչար սխալվում են:

Սխալվում են, վորովհետև այն յերիտասարգը լավ կոմյերիտական չե, վորը չի իմանում՝ ինչպես ե կազմակերպված Միությունը, չի իմանում այն ներքին

որենքները, վորով զեկավարվում ե նա: Յեթե մենք վերցնենք և մեկ առ մեկ ծանոթանանք բոլոր քաղաքական կազմակերպությունները հետ, կտեսնենք, վոր նրանք բոլորն ել ունեն իրենց ծրագիրն ու կանոնադրությունը: Առանց ծրագրի ու կանոնադրության չի կարող գոյություն ունենալ և հաջող աշխատել վոչ մի քաղաքական կազմակերպություն: Վորովհետև այդ կազմակերպության անդամների համար պարզ չեն լինի կազմակերպության նպատակները (ծրագրերը) և այդ նպատակներին հասնելու համար մղվող պայքարում այն կազմակերպչական որենքները, վորին պիտի յենթարկվեն կազմակերպության բոլոր անդամները:

Լենինյան Կոմյերիտմիությունն ել նույնպես, իբրև յերիտասարդական քաղաքական գաստիարակչական-հասարակական կազմակերպություն, ունի իր ծրագիրն ու կանոնադրությունը: ՌԼԿ ՅՅՄ-ի ծրագիրն ու կանոնադրությունը

առաջին անգամ ամբողջովին քննվել և ընդունվել են ՌԿՅՅՄ Համառուսական Յ-րդ համագումարում 1920 թվի աշնանը:

ԻՆՁ Ե ԾՐԱԳԻՐԸ.

ՌԼԿՅՅՄ ծրագիրն ամեն մի յերիտասարդ բանվորին ու գյուղացուն ցույց ե տալիս մեր Միության նպատակները:

Ծրագրի մեջ գրված ե նրա մասին, թե ինչ աշխատանք ե ցանկանում կատարել մեր Միությունը բանվոր և գյուղական յերիտասարդության ընդհանուր կրթության և կոմմունիստական դաստիարակության գործում: Այնտեղ պարզ ասված ե այն աշխատանքների մասին, վոր կատարում ե մեր Միությունը բանվոր յերիտասարդության և գյուղի յերիտասարդ բատրակների տնտեսական և իրավական դրությունը բարելավելու համար:

Նա վորոշում ե մեր Միության զերը

Սորհրդային Հանրապետութեան պաշտպանութեան և սոցիալիստական շինարարութեան բոլոր բնագավառներում:

Ի՞նչ է ԿՍՆՈՆԱԴԻՈՒԹՅՈՒՆԸ.

Իսկ ի՞նչ է կանոնադրութեանը և ի՞նչու յետո՞հարկավոր մեր Միութեանը: Յեթե ծրագիրը ցույց է տալիս մեր Միութեան և՛ նպատակը, և՛ այդ նպատակին հասնելու ճանապարհները, ապա Միութեան կանոնադրութեանը ցույց է տալիս Միութեան ներքին կյանքի որենքները, նրա կազմակերպչական կառուցվածքի ձևերը, վորով կարելի յետ հասնել մեր նպատակին: Կոմյերիտմիութեանը, վորն իր վրա յետ վերցրել աճող սերնդի քաղաքական դաստիարակութեան ամբողջ աշխատանքը, վորն ակտիվ կերպով մասնակցում է, Կոմմունիստական կուսակցութեան ղեկավարութեան տակ, բուրժուազիայի դեմ մղվող պայքարին և սոցիալիստական տնտեսութեան բարձրացման գոր-

ծին, չի կարող հաջող աշխատել առանց հմուտ կազմված կանոնադրութեան: Այստեղից արդեն պարզ է, թե ինչու ամեն մի կոմյերիտական պիտի ուշի ուշով և խորը ուսումնասիրի մեր Միութեան կանոնադրութեան ամեն մի կետը: Պիտի ուսումնասիրի, վորովհետև առանց այդ նա չի կարող վորոշել իր մասնակցութեան ձևերը մեր Միութեան ընդհանուր աշխատանքներին մեջ, չիմանալով Միութեան ներքին որենքները՝ լավ կոմյերիտական չի լինի և ակտիվ կերպով չի մասնակցի մեր Միութեան հասարակական-քաղաքական աշխատանքներին մեջ:

II. ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

Ո՞վ ԿՍՐՈՂ է ԼԻՆԵԼ ՌԼԿՏԵՄ-ի ԱՆԴԱՄ.

Ամեն մի կազմակերպութեան աշխատանքը մեծ մասամբ կախված է նրանից, թե ինչ սոցիալական կազմունի այդ կազմակերպութեանը:

Մենք գիտենք, վոր 1903 թվականին մեր կուսակցության 2-րդ համագումարում բայընիկները և մենշևիկները առաջ գալու պատճառները մեկն ել կուսակցության անդամի դերը ու նշանակության հարցն եր։ Բայընիկներն ասում եյին, վոր կազմակերպության շարքերը կարելի յե ընդունել միայն նրանց, վորոնք անմիջապես, ակախիվ կերպով աշխատում են կուսակցական վորևե կազմակերպության մեջ, վճարում են անդամավճար և վորոնք իրենց գործն են դարձրել անխնա կոխիվ մղել ցարիզմի դեմ, կոմունիստական հեղափոխության հաղթանակի համար։ Մենշևիկներն ընդունելության գործին ավելի թեթև են մտաենում։ Նրանց կարծիքով ամեն մեկին, ով լուկ ցանկություն ե հայտնում, կարելի յե ընդունել բանվորական կուսակցության մեջ։ Հետագայում նրանք այդպես ել անում եյին։

Հոկտեմբերյան հեղափոխությունն

ապացուցեց բայընիկները ճիշտ լինելը։ Մենշևիկները, վորոնք ամեն մեկին ընդունում եյին կուսակցության շարքերը, վերջ ի վերջո դավաճանեցին բանվորության գործին և անցան բուրժուազիայի կողմը։

Դրա համար ել կազմակերպության մեջ ընդունելու հարցը հիմնական հարցերից ե, վորի հետ լավ պետք ե ծանոթանանք։

Տեսնենք՝ ինչ ե ասում այդ մասին մեր կանոնադրությունը։

«ՌԼԿՅԵՄ անդամ հաշվվում ե 14—23 տարեկան հասակ ունեցող յուրաքանչյուրը, վորն ընդունում ե Միության ծրագիրն ու կանոնադրությունը, աշխատում նրա կազմակերպություններից մեկում, յենթարկվում ե Միության բոլոր վորոշումներին ու վճարում անդամավճար»։

Կարող են լինել կոմյերիտականներ կամ անկուսակցական յերիտասարդներ, վորոնք կարգալով այդ յերկու

սողը՝ ասեն, վոր Միութեան մեջ ամեն մեկը, ինչ սոցիալական ծագում ելնա ունենա, կարող ե հեշտութեամբ մտնել:

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆՆ ԻՐ ԵՅՈՒԹՅԱՄԲ ՊՐՈՒԵՏԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ Ե.

Այդպես մտածող ընկերները չարաչար սխալվում են: Սխալվում են, վորովհետև նրանք մոռանում են Կոմյերիտիութեան դասակարգային բնույթը, նրա դասակարգային եյությունը:

Նրանք մոռանում են, վոր ԿՅԵՄ-ը պրոլետարական կազմակերպութիւն ե իր նպատակով ե վոր նա չի կարող թույլ տալ, վոր ամեն մի յերիտասարգ մտնի իր շարքերը:

Մեր Միութեան ծրագրի Գլ. 29-ը ամբողջովին վորոշում ե ՌԼԿՅԵՄ-ի եյությունը:

Ահա նա. —

«Համապրոլետարական շարժման մի մաս լինելով հանդերձ, ՌԼԿՅԵՄ իր

խնդիրներով ե աշխատանքով հանդիսանում ե դասակարգային, պրոլետարական մի կազմակերպութիւն: Նրա հիմնական ե դեկավար կորիզը հանդիսանում ե բանվոր յերիտասարգութիւնը:

ՌԼԿՅԵՄ-ն իր շարքերն ե քաշում բանվոր յերիտասարգութեան լայն մասսաներին ե քաղաքային մանր-բուրժուական միջավայրից դուրս յեկած այն անհատներին, վորոնք ցուցադրել են իրենց նվիրվածութիւնը՝ պրոլետարիտային: ՌԼԿՅԵՄ-ը գյուղում հենվում ե չքավոր ե բատրակ յերիտասարգութեան վրա, իր շարքերն ընդունելով նաև միջակ գյուղացիութեան յերիտասարգութեան այն տարրերին, վորոնք անցել են կոմմունիզմի կողմը»: (ՌԼԿՅԵՄ ծրագրի եջ 35, § 29):

Ծրագրի այս կետից պարզվում ե, վոր ԼԿՅԵՄ-ն իր եյությամբ պրոլետարական ե, իսկ իր սոցիալական կազմով՝ բանվորա-գյուղացիական: Միութեան

մունքն ունենալ դեպի այն յերիտասարդությունը, վորն ուրիշ սոցիալական ծագում ունի, որինակ՝ ինտելիգենտները, ծառայողները և այլն: Նրանք ընդունվում են Միության մեջ խիստ քննությունից, նրանց հետ լավ ծանոթանալուց հետո, հին կուսակցական և կոմյերիտական ընկերների յերաշխավորություններով և $I^{1/2}$ տարվա թեկնածուական ստաժով:

Այս դժվարությունները ծառայողների և ինտելիգենտների համար սահմանվում են նրա համար, վորպեսզի դրանցից ամենալավերն ընդունվեն ԿՅՅՄ-ի շարքերը: Մեկ և կես տարվա ստաժը սահմանում ենք նրանց փորձելու համար միութենական աշխատանքներում, զաստիարակելու նրանց կոմմունիստական վոզով և խիստ շոկելով լավերին, հարազատներին՝ փոխադրելու ԿՅՅՄ-ի անդամ:

Թեկնածու լինելու ժամանակ կոմյերիտականը յենթարկվում է բոլոր

վորոշումներին, կատարում է բոլոր պարտականությունները, միմիայն չի ոգտվում վճռական ձայնի իրավունքից*:

Ո՞վ է ԸՆԴՈՒՆՈՒՄ ՈՒԿՅԵՄ-ի Մեջ.

Միության մեջ կարող է ընդունել միայն բջիջը: Առանց բջիջի վոչ մի յերիտասարդ չի կարող մտնել Միության շարքերը: Կանոնադրության այս կետը հնարավորություն է տալիս լավ շոկողություն կատարել Միության մեջ մտնող յերիտասարդների մեջ և ամենալավերին, վորոնց ճանաչում են տվյալ հիմնարկի, գործարանի, գյուղի կամ դպրոցի բջիջի անդամները, ընդունել ԿՅՅՄ-ի շարքերը:

* «Թեկնածուները յենթարկվում են ԿՅՅՄ-ի բոլոր վորոշումներին, տանում են Միության անդամի բոլոր պարտականությունները և ժողովներում ոգտվում են խորհրդակցական ձայնի իրավունքով»:

(ՀԼԿՅՅՄ-ի կանոնադրությունից)

Այս կամ այն յերիտասարդի զիմու-
մը բջիջի ժողովում քննելուց հետո ան-
ցնում է գավառային կոմիտեն, վորը և
վերջնականապես հաստատում է բջիջի
վորոշումը:

ՄԻՈՒԹՅԱՆ ԴԻՍՅԻՊՈԼԻՆԱՆ.

Միությունն ուժեղ է, կիրառում է
կյանքում իր բոլոր վորոշումները,
վորովհետև նա լավ է կազմակերպված,
նրա զիսցիպլինան ամուր է:

Մեր Միությունը շատ խիստ է վար-
վում գեպի այն կոմյերիտականները,
վորոնք խախտում են մեր Միության
կանոնադրությունը, վորոնք անզիս-
ցիպլինար են, վորոնք չեն մասնա-
կցում Միության կյանքին և իրենց
վարք ու բարքով զցում են ԼԿՅՄ-ի
հեղինակությունը:

Ո՛վ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՀԵՌԱՅՆԵՆԻ
ԿՅՄ-ԻՑ.

Միությունից իրավունք ունի հեռա-
ցնել բջիջը (բջիջի վորոշումը հաստատում

1003
ԵԳԷԸԼ

ե կոմիտեն), ընդհանուր ժողովը և
զեկավար մարմինը, յեթե նա ունի
բավականին ավյաներ այս կամ այն
կոմյերիտականների մասին: Դուրս ա-
նելու խնդրում նույնպես չի կարելի
հեշտ մոտենալ և ամեն մի թեթև բա-
նի համար դուրս անել ԿՅՄ-ից:
Միությունից դուրս պետք է անել այն
յերիտ-բանվորներին և գյուղացիներին,
վորոնց ուղղելու, դաստիարակելու վոչ
մի միջոց, հնար չի մնացել:

III. ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆՆԵՐԻ ԽՆՆ-
ԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԸ.

Ինչ կոմյերիտական կգտնենք գյու-
ղում, վորը կարողանա լավ և ամբող-
ջովին պատմել ձեզ իր անելիքների մա-
սին, իրենց գյուղում, իբրև ՌԼԿՅՄ-ի
անդամ:

Շատ բջիջներ ունենք,
խատելը հաջող առաջ



գլխավոր պատճառն այն է, վոր այդ բջիջի անդամները չեն իմանում իրենց անելիքները Միության մեջ, Միությունից դուրս, գյուղացիական և բանվորական մասանների մեջ:

ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ՄԱՐԴ Ե.

Ամեն մի բանվոր և գյուղացի յերիտասարդ պիտի լավ մտածի և ապա մտնի ԿՅԵՄ-ի շարքերը:

Նա պիտի իմանա, վոր ԿՅԵՄ-ի մեջ մտնելով՝ նա իր կյանքը սերտ կապում է կոմմունիստական հեղափոխության հետ, պատրաստվում է հետագայում Կոմկուսի շարքերն անցնելու:

Ամեն մի կոմյերիտական պետք է առաջ տանի կոմյերիտմիության, կուսակցության ամբողջ աշխատավորության գործը, նա ակտիվ կերպով պիտի մասնակցի մեր յերկրի սոցիալիստական շինարարության և գյուղի անտեսության բարձրացման գործին:

Նա պատասխանատու յե դառնում, վորովհետև նա հանդիսանում է մի կազմակերպության անդամ, վորն իրեն նպատակ է դրել բարեփոխել մեր յերկրի կացությունը:

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՆՁԻՆ
ԻՐԱՎՈՒՆԲՆԵՐ ՉԻ ՏԱԼԻՍ.

Շատ յերիտասարդներ կան, վորոնք կարծում են, վոր բավական է մտնել կոմյերիտմիության մեջ, կոմյերիտի տոմս ստանալ և իրենց գյուղի, գործարանի կամ հիմնարկի տերը, իշխանը պիտի դառնան: Դեռ մինչև հիմա յել կարելի յե պատահել կոմյերիտականներ, վորոնք ի չարն են գործադրում իրենց միութենական տոմսը և վարկաբեկում ԿՅԵՄ-ն իրենց անհատական շահերի համար: Մենք պետք է լավ իմանանք, վոր վոչ մի իրավունքներ կոմյերիտմիության տոմսը յերիտասարդին չի տալիս: Նա իրավունք չի տալիս վոչ մի դեպքում թեղադրելու, վար-

չական, քոթիվայական քաղեր անելու գյուղում՝ բանտարկելու, ծեծելու և այլն:

Կոմյերիտականը տարբերվում է անկուսակցական յերիտասարդից նրանով միայն, վոր նա իբրև վորոշ քաղաքական կազմակերպության անդամ ավելի յե կազմակերպված, ավելի յե գիտուն յեվ ձգտում է հեղափոխական նպատակներին:

Այդ նպատակների համար նա կազմակերպված պայքարում է, իր վրայ յե վերցնում մի շարք ծանր պարտականություններ, իբրև յերիտասարդության առաջավոր գնդի զինվոր:

Կոմյերիտականը չունի այնպիսի իրավունքներ, վորոնցից զուրկ է անկուսակցական յերիտ-գյուղացին կամ բանվորը:

Նա ակտիվ կերպով աշխատում է Կոմյերիտմիության մեջ, նա ցանկանում է բարեփոխել և լավացնել վոչ միայն կոմյերիտականների տնտեսա-

իրավական գրությունը, այլ բոլոր յերիտասարդ բանվորների և գյուղացիների գրությունը: Անկուսակցական բանվորներն ու գյուղացիները սիրով ու հարգանքով կվերաբերվեն դեպի մեր Միությունը այն ժամանակ, յերբ նրանք իրենց աչքով տեսնեն կոմյերիտականի լավ, գովելի գործը:

ԲԱՐՁՐ ՊԱՀԻՐ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ
ԿՈՄ. ԴՐՈՇԸ.

ՌԼԿՅԵՄ-ի մեջ մտնող յերիտասարդներն այս լավ պիտի հասկանան և ամեն միջոց գործադրեն, վորպեսզի Միության անունը, հեղինակությունը և նրա կոմմունիստական կարմիր գրոշը բարձր պահեն և այդպիսով կարողանան իրենց կողմը քաշել բոլոր բանվորներին և գյուղացիներին:

ՌԼԿՅԵՄ-ի կանոնադրության 7-րդ կետն այդ մասին հետևյալն է ասում.—
«Կոմյերիտական—դա յուրաքանչյուր յերիտ-բանվորի և գյուղացու բարձր կո-

չունին եւ ՌէկիՅէՄ-ի յուրաքանչյուր անդամ ինչպես Միութեան ներսը, նույնպես ել Միութեանից դուրս պետք եւ արգարացնի այդ կոչումը, բարձր պահել ու սրբութեամբ պաշտպանի իր կազմակերպութեան ու կոմմունիստական դրոշի պատիվը»:

«Յոյր կոմյերիտականները պետք եւ հիշեն, վոր նրանք հանդիսանում են բանվոր դասակարգի ավանգարդը՝ Ռուսաստանի կոմկուսակցութեան ապագա անդամները եւ պատրաստվում են այդ մեծ ու զժվարին պարտականութեանը արժանի կերպով կիրառելու»:

ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԶՊԵՏՔ
Ե ԽՈՒՍԱՓԻ:

Յանկանալով իմանալ անկուսակցական հասակավոր գյուղացիների կարծիքը մեր գյուղի կոմսոմոլի մասին, յես հարցըրի նրանցից մեկին:

— Ի՞նչպես եւ աշխատում ձեր գյուղի կոմսոմոլի բջիջը:

Այդ գյուղացին մտածեց, մտածեց եւ պատասխանեց.

— Լավ եւ, շատ լավ եւ. կարդում են, գրում են, մեզ խորհուրդ են տալիս, ոգնում են գյուղ-խորհրդին, կոոպերատիվին, ամա մի բանը շատ վատ եւ:

— Ի՞նչն եւ,— հարցնում եմ յես:

— Եդ են ա, վոր շատ գոռոզ են նրանք. տավարը չեն գնում, վարուցանքսից փախչում են. դա շատ վատ եւ, մեր գյուղացիները դրանից են դժգոհ:

Ուրիշ գյուղերում ել հարցրի: Նույն պատասխանն են տալիս գյուղացիները:

Քաղաքներում անգործ կոմյերիտականներին մի ժամանակ զժվար եյին գործի ընդունում. պատճառն այն եր, վոր կոմյերիտականներից շատերը լավ չեյին վերաբերվում դեպի իրենց աշխատանքները: Վոչ վոք թող չնեղանա, այդպես եւ յեղել, պետք եւ աշխատենք, վոր հետագայում այդպես չլինի:

Կոմյերիտականներն իրենց յեռան-

դուն աշխատանքով գործարանում, հիմ-
նարկութեան, գյուղի տնտեսութեան մեջ
պետք է որինակ դառնան անկուսակցա-
կանները համար:

ՊԵՏԲ Ե ԲԱՐՁՐԱՅՆԵԼ ՄԵՐ ՅԵՐԿԻՐԻ
ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ.

Մենք գիտենք, վոր մեր կուսակցու-
թյունը, խորհրդային իշխանությունը
ջանք են թափում, վորպեսզի բարձրա-
ցնեն մեր յերկրի տնտեսությունը: Կոմ-
յերիտականն ամենուրեք իր աշխա-
տանքները մեջ պիտի լավ հիշի այն խըն-
դիրները, վոր դրել է իր առաջ Կոմկուսը:
Յե՛վ այն կոմյերիտականները, վորոնք
խուսափում եյին իրենց տնտեսութեան
մեջ աշխատելուց, վատ կոմյերիտակա-
ններ են, վորովհետև նրանք չեն կատա-
րում մեր կուսակցութեան հրահանգը:

Միութեան անդամներն այդպես վե-
րաբերվելով դեպի իրենց աշխատանք-
ները՝ չեն կատարում կանոնադրութեան
այն կետը, վորտեղ ասված է. —

«Միշտ ու ամենուրեք խորհրդային
Հանրապետութեան գործարաններում,
կարմիր բանակում, գյուղական տնտե-
սութեան մեջ, պետական աշխատանք-
ներում կոմյերիտականը պետք է լինի
առաջիններից առաջինը, ամենաաշխա-
տունակն ու յեռանդունը, ազնիվն ու
համարձակը, վոր որինակ ծառայի մնա-
ցած յերիտասարդութեանն ու ամբողջ
աշխատավորութեանը»:

ՀԼԿՅԵՄ-ի ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄ-
ՆԱԿԱՆ ՄԱՍԸ— ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱ-
ՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆ Ե.

Մեր Միութեանը յերիտասարդի դաս-
տիարակութեանը չի մոտենում այն-
պես, ինչպես ուրիշ սոցիալիստական յե-
րիտասարդական կազմակերպություն-
ները: Նրանք ամեն կերպ աշխատում
են հեռու պահել իրենց անդամներին
բանվոր դասակարգի պայքարից, կու-
սակցական շինարար աշխատանքներից:
Մեր Միութեանը, ընդհակառակը, սեր-

տորեն կապուած ե կուսակցութեան պայքարի հետ և ակտիվ կերպով մասնակցում ե նրա աշխատանքներին: Առանց գործնական, շինարարական, կուլտուրական աշխատանքներին մասնակցելու չի կարելի Կոմյերիտմիութեան շարքերում լավ պատրաստուած և կայուն կոմմունիստներ պատրաստել: Կոմյերիտականը լավ կոմմունիստ կդառնա այն ժամանակ, յերբ քաղաքականապես զարգանալով՝ նա միևնույն ժամանակ ակտիվ կերպով մասնակցելով կուսակցութեան բոլոր աշխատանքներին, ապագայում պատրաստ կլինի իր վրա դրած պարտականութիւնները կատարելու: Բայց, իհարկե, սա դեռ չի նշանակում, վոր մեր կոմյերիտականները գյուղերում պետք ե վարչական թեքումներ անեն և խանգարեն և մեր և Կոմկուսի աշխատանքներին գյուղացիութեան մեջ:

Ընդհակառակը: Մեր Միութեան ծրագրի § 13 Ը միանգամայն այլ կերպ ե

բնորոշում մեր դաստիարակչական խնդիրները հասարակական-քաղաքական աշխատանքներին մասնակցելու ժամանակ:

Ահա թե ինչ ե ասում մեր Միութեան ծրագրի § 13 կետը.—

...ՌԼԿՅՅՄ-ն ակտիվ կերպով մասնակցում ե Կոմկուսակցութեան և խորհրդարային իշխանութեան կողմից սոցիալիստական շինարարութեան ասպարիզում տարվող բոլոր աշխատանքներին, այդ գործնական աշխատանքի ընթացքում իր անդամների և բանվորագյուղացիական անկազմակերպ յերիտասարգութեան շարքերից դաստիարակելով խորհրդային իշխանութեան և ժողովրդական տնտեսութեան համար հմուտ շինարարներ:

Սոցիալիստական շինարարութեան ասպարիզում ՌԼԿՅՅՄ-ի նշանավոր խնդիրը հանդիսանում ե ՌԼԿՅՅՄ-ի յուրաքանչյուր անդամին քաջելու պրակտիկ անասական կամ կուլտուրական մի

այնպիսի աշխատանքի մեջ, վորը նրան կհետաքրքրի. կհամապատասխանի նրա հակումներին և ընդունակութուններին և միևնույն ժամանակ կնպաստի կոմմունիստական դաստիարակության գործին»:

ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆԸ ՍՈՎՈՐԵԼՈՎ, ԻՐ ՅԵՏԵՎԻՅ ՊԵՏԲ Ե ՏԱՆԻ ԱՆԿՈՒՍԱԿՅԱԿԱՆ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆԸ.

Մենք ասացինք, վոր Կոմյերիտմիությունն ամբողջովին, և ամեն մի կոմյերիտական առանձին-առանձին պետք է սերտորեն կապված լինի անկուսակցական աշխատավորության հետ:

Կան կոմյերիտականներ, վորոնք Կոմյերիտմիության շարքերը մտնելուց հետո յերեսները թեքում են անկուսակցականներին: Դա սխալ է: Կոմյերիտմիությունը հանդիսանում է մեր կուսակցության համար մի ջրանցք, մի ճանապարհ, վորով նա կապված է և ազդում է անկուսակցական յերիտասար-

դության լայն խավերի վրա: Կոմյերիտմիությունն այդ կապն ամրացնելով պետք է կարողանա իր ղեկավարությամբ հասարակական-կուլտուրական շինարարական աշխատանքի քաշել անկուսակցական յերիտասարդությանը, դաստիարակելով նրան կոմմունիստական վոգով:

Վորպեսզի մեր գյուղական բջիջը կարողանա այս աշխատանքները կատարել, նա պետք է շատ լավ ծանոթ լինի այն ամենի հետ, ինչ կատարվում է Խորհրդային Միության սահմաններում և նրա սահմաններից դուրս: Լավ ծանոթ լինելուց բացի նա պիտի այնքան գիտուն լինի, վոր կարողանա անկուսակցականներին ճիշտ բացատրի այդ բոլորը: Նա պիտի քաղսքականապես լավ պատրաստվի քաղ-ընթերցման խմբակներում, վորպեսզի կարողանա ամեն մի խնդրին ճիշտ մոտենալ:

Սմեն մի կոմյերիտական «ձգտում է կոմմունիստական շինարարության հա-

մար անհրաժեշտ գիտելիքներին փոր-
քան կարելի յե շատ ստանալ», փորով-
հետև սոցիալիզմի հասնելը հնարավոր
ե, յերբ մեր տնտեսութեան զարգաց-
ման հետ մենք կունենանք այդ շի-
նարարութիւնը ղեկավարող պատրաստ-
ված մարդիկ: Մեր Միութեան ծրա-
գրի 24-րդ կետն այդ մասին ասում ե.—

«Միութեան անդամներին, դաստիա-
րակելով գիտակից կոմմունիստներ,
ՌԼԿՅՅՄ խուսափում ե միայն չոր,
քաղաքական լոգունգներ յուրացումից
և աշխատում ե յոր անդամներին ծա-
նոթացնել մարդկային կուլտուրայի հո-
գեկան ամբողջ հարստութեան հետ,
ձգտելով բարձրացնել բանվորա-գյու-
ղացիական յերիտասարդութեան լայն
մասսաների և ՌԼԿՅՅՄ անդամներ
ընդհանուր կուլտուրական մակար-
դակը»:

(ՌԼԿՅՅՄ-ի ծրագիր, էջ 32, § 24)

ՀԵՏԵՎԻՐ ԱՌՈՂՁՈՒԹՅԱՆԴ.

Բանվորութեան և չքավոր գյուղա-
ցիութեան պայքարը բուրժուազիայի
դեմ ղեռ յերկար ե տևելու: Դեռ միակ
մեր յերկրում ե հաստատված բանվորի
և գյուղացիների իշխանութիւնը: Ու-
րիշ յերկրների բանվորներին ղեռ շա-
հագործում են հարուստները — կապի-
տալիստները: Մեր յերկրի բանվորնե-
րը և գյուղացիները, ճիշտ ե, հիմա
բուրժուաների դեմ ղեռքը ձեռներին
չեն կուլում: Նրանք այսօր մեծ աշ-
խատանք են կատարում իրենց տնտե-
սութիւնը վերականգնելու համար:

Այդ կռիվը վերջնական հաղթանակի
հասցնելու համար համայն աշխարհում
և աշխատանքը տնտեսութեան մեջ հա-
ջող տանելու համար անհրաժեշտ ե
առողջ և ֆիզիկապէս ուժեղ սերունդ:
Ինչի՞ յե պետք այն գյուղացին, փորը
դվաթին, ուժով չի, փորը չի կարողա-
նում մաճն այնպէս բռնի, փոր մի կես

արշին հող վերցնել, վոր գերանդին մի
գարկելով մի սաժեն հողի վրա խոտը
հարի:

Հիվանդ գյուղացին յերբեք իր
տնտեսությունը չի կարող կառավարել,
մշակել, նա պիտի յւրիշին վարձով
կանչի ոգնության: Հիվանդ բանվորը
լավ և արդունավետ չի կարող աշխա-
տել գործարանում, չի կարող շատ
կտավ ու մեխ շուտ հասցնի գյուղին:

ՌԼԿՅԵՄ-ը մեծ նշանակութուն տա-
լով յերիտ-բանվորներին և գյուղացիներ-
ի առողջությանը, կանոնադրության
և ծրագրի մեջ հատուկ կետերով պար-
տադիր է դարձնում ամեն մի կոմյե-
րիտականի համար ֆիզկուլտուրայով
(սպորտով) պարապելը:

ՌԻՃԵՂԱՅՐՈՒ ԱՄԵՆԱՅՆ ԿԵՐՊ ԿԱՐՄԻՐ
ԲԱՆԱԿԻ ՇԱՐՔԵՐԸ.


Մենք ասացինք, վոր մենք թշնա-
միներ գեռ ունենք: Արտասահման վա-
խած գեներալները, կապիտալիստները,

մենշիկները, գաշակները, ուրիշ յեր-
կըրներ ի կապիտալիստները մի բանի
յեն սպասում, վոր հարձակվեն բանվո-
րա գյուղացիական Խորհրդային Միու-
թյան վրա:

Մեր իշխանությունը նրանց համար
աչքի գրող է դառել: Վորովհետև տես-
նում են, թե ինչպես որեցոր մեր գյու-
ղացիությունը (և գյուղական տնտե-
սությունը), մեր գործարանները, ամ-
բողջ խորհր. իշխանությունն ուժեղա-
նում, վոտի յեն կանգնում:

Այդ գեներալները և կապիտալիստ-
ների շտահները, ախորժակները փակե-
լու համար և նրանց սրած ատամները
ջարդելու համար մեր իշխանությունը
պահում է բանվորա-գյուղացիական
կարմիր բանակը:

Կարմիր-բանակայինի պատվավոր
կոչումը կրում են միմիայն ռուսի-
յերիտասարդները և գյուղացիները,
ընդամենից լավ են գրողները
գասակարգային շահերը:



Գիտակցելով Կարմիր բանակի նշանակութունը՝ Կոմյերիտմիութունն իբրև բանվորա-գյուղացիական յերիտասարդության դեկավարը, պետք է վնջ մի ջանք չխնայի Կարմիր բանակն ուժեղացնելու համար:

Մեր միության ծրագրի § 15-րդը ընդհանուր առմամբ այսպես է բնորոշում ԼԿՅՅՄ-յան այդ ասպարիզում անելիքները. —

«ՌԼԿՅՅՄ ակտիվ մասնակցում է բանվորա-գյուղացիական Կարմիր բանակի շինարարության և ամրապնդման ասպարիզում, զորակոչի ժամանակ ոգնելով խորհրդային իշխանությանը, պայքարելով դասալքության դեմ կարմիր-բանակայինների մասերում, և այլն»:

Բացի այդ՝

«ՌԼԿՅՅՄ ակտիվ կերպով մասնակցում է նախազինակոչայինների պատրաստության աշխատանքներն անցկացնելու մեջ (վորը նպատակ է դրել ռազ-

մական կրթության և ֆիզիկական դաստիարակության ճանապարհով պատրաստել Կարմիր բանակի ապագա կազմերը), պարզաբանելով բանվորական և գյուղացիական յերիտասարդության լայն մասսաներին նախազինակոչային պատրաստության նշանակության և մեթոդների մասին»:

(ՌԼԿՅՅՄ ծրագիր, եջ 29, § 18):

Մեր Միությունը առանց քաշվելու հայտարարում է, վոր ինքը Կարմիր բանակի ուժերի պահեստն է, վորը պատրաստ է ամեն մի ըուպե հազարավոր կոմյերիտականներ տալու նրա շարքերը: Նա իր անդամների և անկուսակցական մասսայի մեջ տանում է զինվորական պրոպագանդա, ծանոթանում է զինվորական գիտելիքների հետ, ամեն ինչ անում է, վորպեսզի յերբ մեզ վրա հարձակվեն, զինված-պատրաստված և կուռ շարքերով հանդիպենք մենք մեր դասակարգային թշնամիներին:

Ամեն մի կոմյերիտական պետք է լուրջ մտածի և ոգնի Կարմիր բանակին և լայն աշխատանք տանի աշխատավորութեան մեջ, վորպեսզի նրանք գովեն, շոյեն իրենց հարազատ Կարմիր բանակը:

ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ, ՀԻՇԻՐ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ
ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏՈՂ ԿՈՄՅԵՐԻՏԱ-
ԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

Շատ կոմյերիտականներ կան, վորոնք չեն իմանում, թե բուրժուական յերկըրներում կոմյերիտականներ կան թե չե:

Նրանք կարծում են, վոր ԿՅԵՄ կարող է լինել այն յերկրում, վորտեղ հաստատված է խորհրդային իշխանությունը:

Այդ կարծիքն սխալ է:

Այնտեղ, վորտեղ կա շահագործում, ու դեռ կապիտալիստները ջանք են թափում, վորպեսզի յերիտասարդներին շատ աշխատեցնեն և քիչ աշխատավարձ

տան, այնտեղ կա ԿՅԵՄ: ԿՅԵՄ կազմակերպություններ ներկայումս կան 53 բուրժուական յերկրներում և զաղութներում:

Նրանք այնտեղ պայքարում և աշխատում են չափազանց վատ պայմաններում, հալածանքի յենթարկվելով բուրժուազիայի, կապիտալիստների կողմից:

Ամեն մի կոմյերիտական իր կրծքի վրա ունի մի փոքրիկ նշան, վորի վրա ոռուտերեն լեզվով գրված է КИМ (այսինքն Коммунистический Интернационал Молодежи) — Կոմմունիստական Ինտերնացիոնալ Յերիտասարդութեան: Հայերեն այդ ԿԻՄ-ը գրվում է ՅԵ.Կ.Ի., այսինքն Յերիտասարդական Կոմմունիստական Ինտերնացիոնալ:

ՅԵ.Կ.Ի.-ը համախմբում է իր շարքերում բոլոր (բուրժուական և խորհրդային) գաղտնի և վոչ գաղտնի աշխատող կոմյերիտութենական կազմակերպությունները:

Նա հանդիսանում է բոլոր ԿՅՅՄ-երի կենտրոնը—գլխավոր շտաբը, վորը ղեկավարում է բոլոր յերկրների կոմյերիտմիության աշխատանքները:

ՌԼԿՅՅՄ-ը նույնպես մտնում է ՅՅ.Կ.Ի.-ի մեջ: ՌԼԿՅՅՄ-ը միակ մասսայական մեծ և ուժեղ միությունն է ՅՅ.Կ.Ի.-ի մեջ: Նա ոգնության է գալիս բոլոր բուրժուական յերկրներում աշխատող ԿՅՅՄ-երին իր խորհուրդներով և փորձով ՅՅ.Կ.Ի.-ի միջոցով:

Այն նշանը, վորը կրում են կոմյերիտականները, ցույց է տալիս, վոր ամեն մի կոմյերիտական վոչ միայն ՌԼԿՅՅՄ-ի անդամ է, այլ և ՅՅ.Կ.Ի.-ի միջազգային կոմյերիտմիության անդամ է:

Նա պարտավոր է միշտ հիշել և ոգնել այն կոմյերիտականներին, վորոնք բուրժուական բանտերում տանջվում են, վորոնք կովում են հեռու մեզանից իրենց յերկրի բուրժուաների դեմ: Նա հանդիսանալով ՅՅ.Կ.Ի.-ի

անդամ, պիտի իրազեկ լինի նրանց աշխատանքներին, ժամանակին վճարի իր միջազգային անդամավճար 5-կուպեկը, հիշելով, վոր այն պայքարը, կռիվը, վոր սկսել է բանվոր դասակարգը Կոմկուսի ղեկավարությամբ, գեռ չի վերջացել, գեռ բանվոր դասակարգը շահագործվում է բուրժուական յերկրներում և գաղութներում, վոր նա պայքարում է, և վոր ինքը նույնպես պիտի պատրաստ լինի մասնակցելու այդ միջազգային, պրոլետարական հեղափոխական պայքարին Կոմինտերնի ղեկավարությամբ, վորի ղերշակների տակ համախմբվում է Արևելքի և Արևմուտքի աշխատավորությունը:

IV. ՌԼԿՅՅՄ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊՁԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ.

ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱՅՈՒՄ.

«ՌԼԿՅՅՄ կառուցվում է գեմոկրատական հիմունքներով ըստ արտադրա-

կան տերրիտորիալ հատկանիշի», — այսպէս է ասված մեր Միութեան կանոնադրութեան մեջ: Ահագին մեծ մտքեր են արտահայտված այս միջանի տողում: Այս տողերում ամեն ինչ ասված է մեր Միութեան կազմակերպչական կառուցվածքի և նրա ներքին կանոնների մասին:

Դեմոկրատական կենտրոնացման այս բացատրութիւնն ավելի ևս պարզելու համար վերցնենք և մեր Միութեան առօրյա աշխատանքներին հետեւենք: Մեր Միութեան կանոնադրութիւնը և ծրագիրը լայն հնարավորութիւններ են տալիս ոգտվելու և կիրառելու դեմոկրատիան մեր Միութեան աշխատանքների ընթացքում: Ամեն մի բջիջ, բջիջի ամեն մի անդամ զգատ մասնակցում է մեր Միութեան աշխատանքների բոլոր ասպարեզներում: Կենտրոնական և բոլոր ստորև կանգնած ղեկավարող կոմիտեներն ընդհանուր առմամբ կատարում են այն բո-

լորը, ինչ հրահանգել են նրանց Միութեան կոնֆերանսները և համագումարը, վորին մասնակցել են բջիջների կողմից ընտրված պատգամավորները:

Համագումարը վերջանալուց հետո կենտրոնական և գավառային կոմիտեները համագումարների վորոշումները կոնկրետացնում են և տեղական կազմակերպութիւններին, բջիջների միջոցով իրագործում կյանքում: Այդ աշխատանքները կազմակերպելու ընթացքում բջիջը հանձնարարում է իր անդամներին աշխատանքի այս կամ այն ասպարեզը:

Բջիջի բյուրոյից սկսած մինչև կենտրոն միութեանական բոլոր որգաններն ընտրվում են Միութեան ներկայացուցիչների կողմից: Ընտրութիւնների ժամանակ կոմիտեյի այնպիսի կազմ է ընտրվում, ինչպիսին ցանկանում է համագումարի պատգամավորներին մեծամասնութիւնը: Կոմիտեյի ընտրութիւնից հետո մենք բոլորս պարտավոր ենք կատարել ղեկավարող մարմինների

բոլոր հրահանգները: Պետք է կատարենք, վորովհետև այդ միասնականութեան, դիսցիպլինայի մեջ է մեր ուժը, վորով մենք մինչև հիմա հաղթահարել ենք մեր առաջ կանգնած բոլոր խոչընդոտները:

ԻՆՔՆԱԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՐԻՏ.
ԿՈՄՄՈՒՆԻՍՏ. ԴՍՍՏԻՍՐԱՅՈՒԹՅԱՆ
ՀԻՄՔՆ Ե.

Մենք վերևում ասացինք, վոր Միութեան աշխատանքների ընթացքում բնականորեն անդամները հնարավորութեան ունենալով կերպով մասնակցելու: Մենք ցանկանում ենք վորքան կարելի յետևելի զարկ տանք բնական բոլոր անդամների ինքնագործունեությունը: Ռ.Լ.Կ.ՅԵ.Մ անդամների ինքնագործունեությունը հիմնականն է մեր աշխատանքների ընթացքում:

«Ինքնագործունեությունը կոմունիստական դաստիարակությունը հիմքն է».— այդպես է ասում մեր Միութեան ծրարը:

գիրը: Յերիտասարդութեան ինքնագործունեությունը կոմունիստական կուսակցություն համար լավ անդամներ պատրաստելու ամենաուղիղ միջոցն է: Մեր Միութեան որդանները, բնական բյուրոները Միութեան անդամների ինքնագործունեությունը յերբեք չպետք է խանգարեն. ընդհակառակը՝ նրանք պետք է զարկ տան, կազմակերպեն կոմյերիտականների այդ ինքնագործունեությունը, տանելով այն կոմունիստական ճանապարհով, ոգտագործելով այն մեր Միութեան անդամների կոմունիստական, բայցևեկյան դաստիարակություն համար: Այդպիսով մենք տեսնում ենք, վոր դեմոկրատական կենտրոնացումը հիմնված է մի կողմից ստորին կազմակերպությունները բարձրագույն մարմիններին յենթարկելու հիման վրա, վորի կամքն արտահայտողը կենտրոնական կոմիտեն է հանդիսանում, իսկ մյուս կողմից այդ կենտրոնացումը դեմոկրատական-

համայնավարական ե, վորովհետև բոլոր միութենական մարմինները, բՆԻՂԻԳ սկսած մինչև Կենտրոնական Կոմիտե, ընտրվում են կազմակերպութեան կամ նրա ներկայացուցիչներին կողմից: Բոլոր տեղական կազմակերպութեանները տեղական բնույթ կրող հարցերին քըննութեան ժամանակ ավտոնոմ, ազատ են և նրանցից ամեն մեկը հնարավորութեան ունի իր անդամներին խնայազործունեյութեանն առաջ բերել ու զարգացնել, հիմնականում դեկավարվելով բարձրագույն որդաններին կողմից աված հրահանգներով:

Բայց սրա հետ միասին պետք է իմանալ, վոր մեր Միութեանը կուսակցութեան պես ղեմով կրատական կենտրոնացման խնդրին ամեն ժամանակ միատեսակ չի մոտենում: Այն ժամանակ, յերբ Միութեանը գաղտնի աշխատանք է տանում բուրժուական յերկրներում, կամ խորհրդային իշխանութեանը զինվորական վտանգ է սպառ-

նում, հեղափոխութեան գործը պահանջում է, վորպետքի մեր Միութեանն անցնի զինվորական խիստ կենտրոնացման, յերբ ամեն մի բՆԻՂԻ անդամ հաշվի յե առնված կոմիտեներին կողմից: Միանգամայն այլ դրութեան է ստեղծվում, յերբ հեղափոխութեանն անմիջական վտանգ չի սպառնում, յերբ մեր իշխանութեան առաջ կանգնում են յերկրի խաղաղ-շինարարական խնդիրները: Այս շրջանում վորոշ չափով թուլանում է կենտրոնացումը, դեմոկրատիայի շրջաններն ավելի յեն լայնանում Միութեան անդամներին կոմունիստական բայլչևիկյան դաստիարակութեան տալու համար:

Կոմյերիտմիութեան կանոնադրութեանը լայն հնարավորութեաններ է տալիս ամեն մի կոմյերիտականին ակտիվ կերպով մասնակցելու Միութեան փոքր խնդրից մինչև մեծի լուծման գործում: Համագումարի կամ կոնֆերանսի որակարգը և հրավիրման ժա-

մանակը ամիս ու կես ($1\frac{1}{2}$ ամիս) առաջ նախորոք հայտարարվում և քննութեան եւ առնվում Միութեան ամենացածր կազմակերպութեաններում, և Համագումարի հանած վորոշումները բղիտում են արդեն այն ցանկութեաններէից, վոր հայտնաբերել են ստորին կազմակերպութեանները, ամբողջ կոմյերիտական մասսան:

V. ԲԶԻՋՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

ԲԶԻՋԸ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՆ Ե.

«ԲՆիջը հանդիսանում եւ Միութեան հիմնական կազմակերպութեանը», — ասված եւ ԲԻԿՅԵՄ-ի կանոնադրութեան մեջ:

Ամեն վայրում, գործարանում, դպրոցում, գյուղում, հիմնարկի մեջ, ուր կան Կոմյերիտմիութեան 3 անդամ, կազմակերպվում եւ ԼԿՅԵՄ-ի բնիջ:

ԲՆիջները մեզ մոտ կազմակերպվում են զուտ արտադրողական սկզբունքի

հիման վրա: ԲՆիջները կազմակերպւնական սկզբունքի տեսակետից մեր ԲՆիջները հիմնովին տարբերվում են բուրժուական յերկրները յերիտմիութեանները ԲՆիջներից: ԲՆիջներն այնպէ կազմակերպված են վոչ թե ըստ արտադրողական սկզբունքի, այն վայրերում, գործարաններում ուր տնտեսական պայքարով համախմբված են բանվորները, այլ ըստ թաղերի, փողոցների:

Սա հին, վոչ հեղափոխական, սոցիալդեմոկրատները սկզբունքն եւ, վորոնք ամեն կերպ աշխատում են բանվոր դասակարգը հեռու պահել հեղափոխական պայքարից:

Այդ կերպ կազմակերպված կուսակցութեանները և յերիտմիութեանները պարզ եւ վոր կտրվում են բանվորական հեղափոխական մասսայից, վորն աշխատում եւ գործարաններում: Բանվոր դասակարգն իր պայքարն սկսում եւ գործարանում, ուր կապի-

տալիստի շահագործումն ավելի լավ ե
 յերևան գալիս, վորի դեմ գործարա-
 նային սիստեմով կազմակերպած հե-
 դափոխական բանվորները լավ կկռվեն,
 քան թե ըստ ապրելու տեղի, թաղերի,
 փողոցների, վորտեղ նրանք վոչ թե
 կազմակերպած են հանդիսանում ինչ-
 պես գործարանում, այլ, ընդհակառակը,
 թափթփված, կազմալուծված մի բա-
 նակ, վորը լուրջ պայքարի ընդունակ չէ:

ՄԻՈՒԹՅԱՆ ԲՋԻՋՆԵՐԸ ՄԱՍՍԱՆԵՐԻ
 ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԵՆ.

Այդ ձևով կազմակերպված բլիշները
 միանգամայն կտրված են բանվորական
 մասսաներից, այն ինչ մեր բլիշներն
 իրենց կազմակերպչական սկզբունքով
 կապում են մեր Միությունը և նրա
 դեկավար որգանները լայն բանվորա-
 կան և գյուղացիական յերիտասար-
 դական մասսաների հետ:

Բլիշների աշխատանքը Միության
 հիմնական աշխատանքն է: Լավ ե աշ-

խատում այս կամ այն գործարանի,
 գյուղի բլիշը, կոմյերիտմիության գոր-
 ծը լավ առաջ կգնա, յեթե կկողա
 բլիշների աշխատանքը, կաղում ե Մի-
 ության ամբողջ աշխատանքը: Դրանով
 ե բացատրվում այն մեծ ուշադրու-
 թյունը, վոր նվիրում ե ԼԿՅԵՄ-ն իր
 բլիշների աշխուժ, հաջող աշխատանք-
 ներին: Քանի ամուր լինի Միության
 բլիշը, այնքան ամուր կգգա իրեն մեր
 ամբողջ Միությունը, վորովհետև մեր
 Միությունն իր ամբողջ աշխատանքը
 տանում ե իրեն բլիշի միջոցով:

Բլիշը մեր Միության ամբողջն ե,
 վորն ամեն կերպ, ամեն մի կոմյերի-
 տական իր աշխատանքով պետք ե ու-
 ժեղացնի:

ԲՋԻՋԻ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ.

Բլիշի հիմնական անելիքները, վորը
 պիտի ամեն մի կոմյերիտական իմա-
 նա, դա հետևյալներն են՝

ա. «Ամեն կերպ նպաստել (ողնել)

տվյալ ձեռնարկի (հիմնարկութեան),
գյուղի կամ գաղթացի ՌԼԿՅՅՄ-ի անդամ-
ներին շահկապման:

բ. Ուժեղացնել ու տարածել
Ռ.Լ.Կ.ՅՅՄ-ի ազդեցութեանը Միու-
թյունից դուրս գտնվող յերիտասար-
դութեան վրա:

գ. Նոր անդամներ գրավել:

դ. Ակտիվ մասնակցել ձեռնարկի,
գյուղի գաղթացի ամբողջ կյանքին ու շի-
նարարութեան:

ե. Աշխատել ձեռնարկի յերիտասարդ
բանվորութեան նյութական դրությու-
նը բարելավել:

զ. Իր անդամների մեջ քաղաքալու-
սավորչական աշխատանք տանել:

է. Մասնակցել Միութեան, կուսա-
կցութեան, խորհրդային իշխանութեան
քաղաքական կամպանիաներին:

ը. Ոգնել Միութեան ղեկավար օրգան-
ներին նրանց ամբողջ աշխատանքնե-
րում:

ԲՆԻՆԻ աշխատանքները ղեկավարելու

համար բՆԻՆԻ ընդհանուր ժողովում, Յ
ամսվա ժամանակով, ընտրվում է բՆԻՆԻ
բյուրոն՝ 3 - 7 անդամներից բաղկացած:

ԲՆԻՆԻ բյուրոն պետք է ճիշտ և լավ
հողի վրա դնի բՆԻՆԻ աշխատանքները,
այդ աշխատանքներին քաշի վորքան
հնարավոր է բՆԻՆԻ շատ անդամներ:
ԲՆԻՆԻ բյուրոն աշխատանքների մասին
պարբերաբար ղեկուցումներ է ներկա-
յացնում տվյալ շրջանի կամ գավառի
կոմիտեյին»:

(ՀԼԿՅՅՄ կանոնադր., եջ 15, § 20)

VI. ՄԻՈՒԹՅԱՆ ՖՐԱԿՑԻԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

ՀԿՅՅՄ-ի շարքերից դուրս դեռ շատ
մեծ յերիտասարդական մասսա կա,
վորին մենք դեռ հնարավորութեան
չունենք մեր շարքերն ընդունելու և
քաղաքականապես վերամշակելու:

Բայց դա դեռ չի նշանակում, վոր
մեր Միութեանը պետք է աչքաթող անի

այդ յերիտասարդությանը և նրա մեջ
վոչ մի քաղաքական աշխատանք չտանի:

ԼԿՅՅՄ-ի շարքերն են մտնում բան-
վորա-գյուղացիական յերիտասարդու-
թյան լավագույն, ամենագիտակից ու
առաջավոր տարրերը: Կոմյերիտամիու-
թյունն այնպիսի հմուտ քաղաքակա-
նություն, լուրջ աշխատանք պիտի տա-
նի, վոր կարողանա Միությունից դուրս
մնացող յերիտասարդության ամբողջու-
վին իր ազդեցության տակն առնի:
Այն վայրերում, մինչ-գինակոչայինների
կայաններում, զանազան դպրոցներում
և մի շարք այնպիսի հիմնարկներում,
ուր չկա ԼԿՅՅՄ-ի բջիջ, Կոմյերիտամիու-
թյան անդամները համախմբվում են
Կոմյերիտական ֆրակցիաների մեջ:

«Փրակցիան ունի իր խնդիրները. նա
պետք է տվյալ հիմնարկի անկուսա-
կցական յերիտասարդության մեջ քա-
ղաքական, լուսավորական աշխատանք-
ներ տանի, ապահովի այնտեղ միու-
թյան ազդեցությունը, և այլն»:

Այդ ֆրակցիաներն ինքնուրույն և
անկախ կազմակերպություններ չեն,
այլ անմիջապես յենթարկվում են կո-
միտեներին, վորոնք և նրանց աշխա-
տանքը ղեկավարում են:

«ՌԼԿՅՅՄ-ի ֆրակցիան իրավունք չու-
նի նոր անդամներ ընդունի ու ներ-
կայացուցչական ժողովներին, կոնֆե-
րանսների համար պատգամավորներ
ընտրի»: Ինչպես մենք գիտենք, այդ ի-
րավունքները վերապահված են միմիայն
կոմյերիտական բջիջներին:

«Փրակցիայի բոլոր անդամներն ան-
պայման պետք է վորևե բջիջի անդամ
լինեն»:

Ներկայումս, յերբ մենք նկատում
ենք չափազանց խորը ակտիվություն
անկուսակցական յերիտասարդության
մեջ, ամեն կերպ անհրաժեշտ է ուժե-
ղացնել մեր Միության ֆրակցիաների
աշխատանքները, վորովհետև այն վայ-
րերում, ուր մենք չունենք բջիջ, ֆրակ-
ցիան մեր ազդեցության համար ամե-

նաուժեղ և ամենահարմար կոմմունիստական գենդն է հանդիսանում:

VII. ՌԼԿՅԵՄ ՇՐՋԱՆԱՅԻՆ, ԳԱՎԱՌԱՅԻՆ ՅԵՎ ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

ԼԿՅԵՄ-ը կառուցված է ըստ յերկրային նշանի: Տվյալ տերրիտորիայում գտնվող Միության բարձրագույն որգանն է հանդիսանում ընդհանուր ժողովը, կոնֆերանսը, համագումարը: Համագումարից հետո բարձրագույն որգանն է համագումարի կողմից ընտրված կոմիտեն, վորին յենթարկվում են բոլոր կազմակերպությունները մինչև մյուս համագումարը:

Վորպեսզի ավելի լավ հասկանալի լինի, վերցնենք մի վորևե գյուղական բլիշ, որինակ՝ Թայչարուխ գյուղի բլիշը: Այդ գյուղի կոմյերիտմիության բլիշի բարձրագույն որգանը հանդիսա-

նում է բլիշի անդամների ընդհանուր ժողովը, վորը բլիշի ընթացիկ աշխատանքները ղեկավարելու համար ընտրում է բլիշի բյուրո: Շրջանի սահմաններում գտնվող Թայչարուխի պես ԿՅԵՄ-ի գյուղական բլիշները միանում և կազմում են կոմյերիտմիության շրջանային կազմակերպություն: Շրջանային կազմակերպության բարձրագույն որգանը՝ դա շրջանային ընդհանուր ժողովը է կամ կոնֆերանսը: Այդ կոնֆերանսում, վորտեղ մասնակցում են բոլոր բլիշների կողմից ընտրված պատգամավորները, ընտրում են շրջանային կոմիտե 3-ից-9 հոգուց բաղկացած, ըստ շրջանի մեծության:

ՄԻՌԻԹՅԱՆ ԿՈՄԻՏԵՆԵՐՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒՄ ԵՆ ՄԻՌԻԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ.

ՀԼԿՅԵՄ-ի գավառային կազմակերպության ամենամեծ որգանը հանդիսանում է գավառային կոնֆերանսը, վոր-

տեղ մասնակցում են շրջանային կոնֆե-
 րանսներում ընտրված պատգամավոր-
 ները: Կոնֆերանսն ընտրում է գավ-
 կում: Գավառային կոնֆերանսն իր կողմից
 ընտրում է պատգամավորներ ՀԼԿՅԵՄ-ի
 Համահայաստանյան համագումարին
 մասնակցելու համար: Համահայաստա-
 նյան համագումարն ընտրում է Կենտրո-
 նական կոմիտե և անդրկովկասյան հա-
 մագումարի համար պատգամավորներ:
 ՌԼԿՅԵՄ-ի անդրկովկասյան համագու-
 մարին բացի Հայաստանի պատգամա-
 վորներից մասնակցում են նույնպես
 Ադրբեջանի և Վրաստանի կոմյերիտ-
 միության պատգամավորները: Անդրը-
 կովկասյան համագումարն ընտրում է
 Անդրկովկասյան Յերկրային Կոմիտե:
 Այստեղ նույնպես ընտրվում են ՌԼԿՅԵՄ
 Համամիութենական համագումարին
 մասնակցելու համար, Ադրբեջանի, Հա-
 յաստանի և Վրաստանի կոմյերիտմի-
 ության ներկայացուցիչները: Այսպիսի
 համագումարներ կայանում են Ռուսաս-

տանի բոլոր նահանգներում, շրջանե-
 րում և այն ազգային հանրապետու-
 թյուններում, վորոնք մտնում են Խոր-
 հրդային Միության մեջ: Համամիու-
 թենական համագումարն այդպիսով
 հանդիսանում է ՌԼԿՅԵՄ-ի բոլոր գյու-
 ղական, շրջանային, գավառային և նա-
 հանգային կազմակերպությունների
 կամքն արտահայտողը:

Գավառային և նահանգային համա-
 գումարները հրավիրվում են 6 ամիսը
 մեկ անգամ:

Համահայաստանյան համագումարը,
 ինչպես նաև Ադրբեջանի, Վրաստանի և
 բոլոր ազգային հանրապետությունների
 կոմյերիտմիության և ՌԼԿՅԵՄ-ի համա-
 միութենական համագումարը հրավիրում
 են տարեկան մեկ անգամ: Կոնֆերանս-
 ները և համագումարները լսում են կո-
 միտեյի հաշվետվությունը և վորոշում
 Միության անելիքները հետագայում:

Ի՞նչ ՊԵՍ Ե ԿՍԶՄՎՈՒՄ ԿՈՄԻՏԵՅԻ ՆԱԽԱ-
ԳԱՀՈՒԹՅՈՒՆԸ.

Կոնֆերանսներում և համագումար-
ներում ընտրված կոմիտեներն աշխա-
տանքի բաժանում են կատարում կո-
միտեյի անդամների մեջ: Կազմակեր-
պության և կոմիտեյի ընթացիկ աշխա-
տանքները ղեկավարելու համար կոմի-
տեյի պլենումն ընտրում է իր կազ-
մից կոմիտեյի նախագահություն կամ
բյուրո, վոր 2 ամիսը մեկ անգամ հաշ-
վետվություն է տալիս կոմիտեյի պլե-
նար նիստերում: Նախագահության ան-
դամներն իրենց մեջ նույնպես աշխա-
տանքի բաժանում են կատարում և
ստեղծում բաժիններ: Այդպիսի բա-
ժիններ են՝ ազիտ պրոպ բաժին (վոր
ղեկավարում է կազմակերպության
քաղ- դաստիարակչական աշխատանքնե-
րը), կազմակերպչական բաժին, սնտե-
սա- իրավական և այլն: Այսպիսի աշխա-
տանքի բաժանումը տեղի յե ունենում
բոլոր կոմիտեներում, մինչև ԼՅԿԵՄ-ի
Կենտրոնական Կոմիտեն:

ՄԵՐ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆ.

Ինչպես տեսանք, մեր Միության ա-
մենաբարձր ղեկավար մարմինը,
ՌԼԿՅԵՄ-ի Կենտրոնական Կոմիտեյի
կողմից հրավիրվող Համամիութենական
համագումարն է: Այդ համագումարը
լսում և քննում է Կենտրոնական Կո-
միտեյի ղեկուցումը, հաստատում է
ՌԼԿՅԵՄ-ի ծրագիրն ու կանոնադրու-
թյունը, վորոշում է Միության հերթա-
կան անելիքները և իր աշխատանքների
վերջում ընտրում է ՌԼԿՅԵՄ-ի Կենտրո-
նական Կոմիտե: Կենտրոնական Կոմի-
տեն ղեկավարում է մեր Միության
ամբողջ աշխատանքը, հրատարակում է
Միության կենտրոնական թերթերը և
ներկայացնում մեր ամբողջ Միու-
թյունը համապատասխան պետական,
տնտեսական և պրոֆմիութենական
կենտրոնական և տեղական մարմին-
ներում:
Համագումարների միջև ՌԼԿՅԵՄ-ի

Կենտրոնական Կոմիտեն հրավիրում ե
 ՌԼԿՅԵՄ-ի համամիութենական կոնֆե-
 րանս, ուր ներկա յեն լինում տեղական
 կազմակերպությունների ներկայացու-
 ցիչները: Կենտրոնական Կոմիտեն լրիվ
 կազմող հավաքվում ե 2 ամիսը մեկ
 անգամ, քննում ե Կենտրոնական
 Կոմիտեյի նախագահության զեկուցու-
 մը և վորոշում միութենական աշխա-
 տանքներին վերաբերող դանազան հար-
 ցերը: Նոր համագումար պատրաստ-
 վում, կազմակերպվում ե հրավիրվում
 ե Կենտրոնական Կոմիտեյի կողմից,
 վորը նախորոք հայտարարում ե հա-
 մագումարի որակարգը և ներկայացուց-
 չության նորման (չափը):

Կենտրոնական Կոմիտեյի անելիքնե-
 րը ու պատասխանատվությունը շատ
 մեծ ե: Յեթե ամեն մի կոմյերիտական
 չողնի իր աշխատանքների ընթացքում
 Կենտրոնական Կոմիտեյին և չը-
 բարձրացնի նրա հեղինակությունն իր
 աշխատանքների ընթացքում, այն ժա-

մանակ Կենտրոնական Կոմիտեյի և մեր
 Միության աշխատանքը լավ առաջ չի
 գնա: Մեր բոլորի պարտականությունն
 ե ճշտությամբ կատարել այն բոլոր
 հրահանգները, ինչ տալիս ե մեզ մեր
 Միության Կենտրոնական Կոմիտեն:

VIII. ՌԼԿՅԵՄ-Ի ՅԵՎ ԿՈՄ-
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՓՈԽՆԱՐԱԲԵ-
 ՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

Բանվորների և գյուղացիների կռիվը
 բուրժուազիայի դեմ ղեկավարել ե
 տարիների ընթացքում Լենինի Կոմմու-
 նիստական կուսակցությունը:

Մեր յերկրի արդյունաբերության,
 գյուղական տնտեսության բարձրաց-
 ման գործը և սոցիալիստական իրա-
 վակարգի կառուցման աշխատանքներն
 առաջ են գնում Կոմմունիստական կու-
 սակցության անմիջական ղեկավարու-
 թյամբ: Նա իր ձեռքն ե հավաքել
 բանվոր դասակարգի հեղափոխական

կովի ղեկավարությունը: Բանվորները
և գյուղացիները այդ պայքարը հաջող
առաջ կգնա այն ժամանակ, յերբ այդ
ղեկավարությունը լինի կենտրոնացած
և ուժեղ, ունենալով մի ղեկավար,
միասնական մարմին: Այդպիսի մար-
մին ե մեր կուսակցության կենտրո-
նական կոմիտեն: Մեր Միությունը,
վորը նույնպես ակտիվ մասնակցու-
թյուն ե ցույց տալիս այդ կովին, պետք
ե սերտորեն կապված լինի կոմկուսի
հետ և իր աշխատանքները կատարի
կոմպունիստական կուսակցության ան-
միջական ղեկավարությամբ:

«Միության մեջ ե ուժը», — ասում ե
ժողովրդական առածը: Յե՛վ վորպեսզի
բանվոր և գյուղական յերիտասարդու-
թյան մասսաներում տարվելիք աշ-
խատանքներն արդյունավետ լինեն,
մեր Միությունն աշխատում ե կոմմու-
նիստական կուսակցության անմիջական
ղեկավարության տակ, Մեր Միության
կանոնադրության 50-րդ կետն այդ

մասին հետևյալն ե ասում. «Ամբողջ
Միությունը կուսակցության կողմից
ղեկավարելու նպատակով ՌԼԿՅԵՄ-ի
կենտկոմն անմիջապես յենթարկվում ե
ՌԿԿ կենտկոմին: ՌԼԿՅԵՄ-ի տեղական
կազմակերպություններն աշխատում են
ՌԿԿ համապատասխան նահանգային,
գավառային և շրջանային կազմակեր-
պությունների հսկողության տակ»: Այդ
կապը և ղեկավարությունն ավելի ուժե-
ղացնելու համար ՌԼԿՅԵՄ-ի կոմիտե-
ներն իրենց ներկայացուցիչներն են ու-
ղարկում համապատասխան կուսակցա-
կան կոմիտեներ և ընդհակառակը: Բացի
այդ՝ կուսակցական կոնֆերանսներում
կուսակցությունը կոմյերիտմիության
մեջ ակտիվ աշխատող ընկերներից անց
ե կացնում կուսակցական կոմիտեյի կազ-
մի մեջ, յեթե այդ ընկերն ունի համա-
պատասխան կուսակցական ստաժ:

Կոմյերիտմիության բոլոր կազմա-
կերպությունները և ամեն մի կոմյե-
րիտական առանձին պետք ե իրենց

աշխատանքների ընթացքում սերտ կապ հաստատեն կուս. բջիջների և կուս. ընկերների հետ, վորպեսզի սխալներ և կուսակցության գծին հակասող քայլեր չանեն:

Այս սերտ կապը և աշխատանքների միասնականութունն անհրաժեշտ են, վորովհետև՝

«Իսասկարգային պայքարը պահանջում է պրոլետարական շարժման ընդհանուր ղեկավարութուն և այդ շարժման տարբեր ձևերի միացումը մի կենտրոնում: Այդպիսի ընդհանուր միացնող և ղեկավարող կենտրոն կարող է լինել միմիայն քաղաքական կուսակցութունը:

Պրոլետարիատի կուսակցութունը՝ Ռեկ կոմիտեի կազմակերպչական-քաղաքական լծակն է, վորի ոգնությամբ բանվոր դասակարգի ավելի առաջադեմ մասը հղում է ուղիղ ճանապարհով պրոլետարական և կիսա պրոլետարական ամբողջ մասսան: Իրա համար

պատանեկական կոմունիստական շարժումը, վորպես համապրոլետարական շարժման մի մասը, իրեն նպատակ դնելով կապիտալիստական հին աշխարհի կործանումը, սոցիալիստական հասարակության կազմակերպումը, աշխատում է Ռեկ-ն ղեկավարության ներքո:

(Ռեկեմ ծրագիր, էջ 36, § 31):

IX. ՌԵԿԵ ՄԻՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ.

Ո՛վ չի իմանում, վոր մեր Միութունը զանազան կամպանիաներ է անցկացնում, քաղ. դպրոցներ, ակումբներ է կազմակերպում յերիտասարդության համար:

Այդպիսի աշխատանքներ մեր Միութունը շատ ունի: Այդ բոլորը կատարելու համար անհրաժեշտ են դրամական միջոցներ (փող): Միության զրամական միջոցները հավաքվում են գրլ-

խավորապէս անդամավճարներինց, զեղ-
ջումներինց, նյութական ոժանդակու-
թյունինց և այլ յեկամուտներինց»:
(ՀԼԿՅՅԵՄ-ի կանոնադրությունինց):

Միութեան անդամները և թեկնածու-
ներն անդամավճար են տալիս ամեն ամիս
իրենց աշխատավարձի կէս տոկոսը:
Գյուղացիները համար, վորոնք չեն
աշխատում և աշխատավարձ չեն ստա-
նում, անդամավճարները սահմանվում
են համապատասխան կոմիտեաների կող-
մինց (5-ին 10 կ. ամսական): Իսկ այն
կոմիտեաներին, վորոնք անգործ
են, և նրանք, վորոնք աշխատում են
կարմիր բանակի շարքերում, անդամա-
վճարներինց միանգամայն ազատվում
են: Մեր Միութեան անդամները շատ
անբարեխիղճ են մտաենում զեպի ան-
դամավճարներին զանձաման գործը:
Նրանք մոռանում են, վոր դրանինց
կաղում են Միութեան ընդհանուր աշ-
խատանքները: Ամեն մի կոմիտեանա-
կան ամսի վերջին իրեն հասանելիք ան-

դամավճարը պարտավոր է հանձնել
բջիջի քարտուղարին, վորն իր հերթին
հավաքելով բոլորինց՝ պետք է ներկա-
յացնի համապատասխան ՀԿՅՅԵՄ-ի կոմի-
տեին:

X. Ռ. Լ. Կ. ՅԵՄ. ՅԵՎ Ի. ԼԵՆԻՆԻ
ԱՆՎԱՆ ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒ-
ԹՅՈՒՆԸ.

Պիոներական կազմակերպությունն
իր կազմակերպման առաջին իսկ որինց
աշխատել է Լ. Կ. ՅԵ. Մ.—յան զեկա-
վարութեան տակ:

Կոմիտեաների տակ ան զեկավարութեանը
և ազգեցութեանը պիոներական կազ-
մակերպութեաններում ուժեղացնելու
համար պիոներական կոլլեկտիվները
կազմակերպվում են Լ. Կ. ՅԵ. Մ.
բջիջներին կինց:

Լ. Կ. ՅԵ. Մ. գավառային, նահան-
գային և կենտրոնական կոմիտեաներին
կինց կազմվում են համապատասխան
պիոներական բյուրոներ, այդ բյուրոնե-

ըր սգավում են կոմիտեյի բաժնի իրավունքով և վարում են իրենց աշխատանքները կոմիտեյի ղեկավարութեամբ:

Բյուրոյի աշխատանքները ղեկավարում է համապատասխան Լ. Կ. Յե. Մ. կոմիտեյի անդամներից մեկը: Բացի այդ, բյուրոյի կազմի մեջ են մտնում նույնպես կուսկոմիտեներին, պրոֆսիորութուններին, լուսբաժիններին ներկայացուցիչները և առանձին կոմյերիտականներ, վերոնք գործնական աշխատանք են տանում պիոներական կազմակերպութեան շարքերում:

Պիոներական կազմակերպութեան ամենաստորին բջիջը— դա պիոներական կոլեկտիվն է, վորը իր հերթին բաժանվում է առանձին-առանձին ողակներին: Կոլեկտիվի աշխատանքները վարում է Լ. Կ. Յե. Մ. բջիջի կազմից առաջ քաշված կոմյերիտականը (կոլվար): Ողակի աշխատանքները ղեկավարում է ողակավարը: Լ. Կ. Յե. Մ. բոլոր կոմիտեները և բջիջները և բոլոր

կոմյերիտականները պետք է պատանի պիոներների դաստիարակութեան գործին մեծ ուշադրութեամբ դարձնեն, վորպեսզի նրանք հետագայում լավ կոմյերիտականներ դառնան: Բջիջներն իրենց կազմից պետք է ամենալավ և պատրաստված կոմյերիտականին նշանակեն կոլվար, ողակն նրան պիոներական աշխատանքները կանոնավորելու համար:

Պիոներական կազմակերպութեան նշանակութունը Ռ. Կ. Կ. և Հ. Լ. Կ. Յե. Մ. ի համար շատ մեծ է: Պիոներները՝ Կոմյերիտութեան և Կուսակցութեան փոխարինողները և կոմմունիստական հասարակակարգի ապագա կառուցողներն են, վորչ մի ջանք չխնայել և սովորեցնել պիոներին—ամեն մի կոմյերիտականը պիոներացնելը թյունն է:



«Ազգային գրադարան»



NL0182719

